

ԴԱՎԻԹ ԶԵՅԹՈՒՆՅՈՒ ԶԱՓԱԾՈՆ ՏՈՄԱՐԸ

Մեր մատենագրության մեջ շատ հաճախ են զանազան նյութեր, նույնիսկ փիլիսոփայական գործեր, վերածել բանաստեղծական ձևի: Այն ունեցել է հատուկ արտահայտություն՝ «Ի ոտք հանել» կամ «Ի ոտ հանել»: Նպատակը խիստ գործնական էր: Բանաստեղծական ձևի մեջ նյութը հեշտ էր ընկալվում անգիր անելով: ԺԶ—ԺԷ դարերում սկսում են «Ի ոտ հանել» անստույգ օգտագործումներ: Այստեղ ավելի քան անհրաժեշտ էր այդ գործը: Արձակ չարադրանքի դեպքում աշակերտը ստանում էր մանրամասն, հստակ սովորականներով ծանրաբեռնված գիտելիքներ, որոնց մեծ մասը նույն մասնագիտական էր և պահանջում էր հատուկ ուսումնասիրություն՝ սովորելու համար: Կարևորը զոհ էր գնում անկարևորին: Բայց հայ եկեղեցու սպասավորի՝ համար անհրաժեշտ էր հեշտ գտնել գլխավոր տոների օրերը, տանուտերը, տարեգիրը, օրվա ձայնը և այլն: Այդ բոլորը անհրաժեշտ էր նույնիսկ անգիր իմանալ: Իսկ բանաստեղծական սեղմ ձևը լավագույնս կարող էր ամենամանրամասն գիտելիքները հաղորդել ամփոփ և հստակ: Աշակերտը այն անգիր անելուց հետո, հեշտ կարող էր գտնել իրեն պետք եղածը: Այդ գործը շատ բարձր էր գնահատվում ժամանակակիցների կողմից. հեղինակը այն հորինում էր ուրիշների խնդրանքով:

«Էջմիածին» ամսագրի ընթերցողները ծանոթ են այդպիսի երկու չափաձո տոմարների, հրատարակված՝ մեկը 1952 թվի 2 համարում, մյուսը 1954 թվի 10 և 11 համարներում, Ա. Աբրահամյանի կողմից: Առաջինը Ղուկաս Կեղեցու «Պատմուն Հոռոմոց մեծ տոմարի, պարզեալ հարանցն մեր մախի» գործն է. իսկ երկրորդը Վարդան Կաֆայեցու տոմարն է, շատ ավելի ընդարձակ, որտեղ հեղինակը այսպես է պարզաբանում իր նպատակը.

«Վարդան ծառայ Հօր Աստուծոյ
Խորհուրդ արար շարադրելոյ
Այլ և ջանի ոտք հանելոյ
Դիրեալ մանկանց ուսանելոյ»:

Այժմ ներկայացնում ենք մի երրորդ՝ Դավիթ Զեյթունցու տոմարը, երկու նպատակով. մախ՝ ընթերցողների լայն շրջանակներին տրամադրելու համար մի նոր տարբերակ՝ հավաստելով, որ այն չնայած կտա հետաքրքրվողներին, երկրորդ՝ առանձնաճանաչում է մյուսներից որոշ կողմերով:

Ղուկաս Կեղեցու տոմարը, ինչպես առաջին տողերն են հուշում, հոռոմեական տոմարի վերածումն է. այնտեղ ոչ հայկական ամիսները կան, ոչ տոները, այլ այն, ինչ ընդունված է հոռոմեական տոմարով, ամփոփել է: Իսկ Կաֆայեցու տոմարը անգիր անելու համար շատ ընդարձակ է, որովհետև տարածակամ է ոչ միայն հայկականը, այլև հոռոմեական, պարսկական, պ-

րաքական և ասորական ամսանունները: Բազմաթիվ քառյակներ կան, տարբեր տեղերում ցրված, որոնք հիշատակարանի արժեք ունեն և դասընթացի մաս չէին կարող կազմել: Այս հանգամանքը թերևս իմաստ չունենար, եթե թվականը հիմնավորվում է քառյակով: ահյց կա թվական պարունակող մի ջի ալլոց, ըստ Ա. Աբրահամյանի, Կաֆայեցու տոմարը գրվել է 1676-ին: Այս թվականը հիմնավորվում է քառյակով: Բայց կա թվական պարունակող մի այլ քառյակ, որի՞ն Աբրահամյանը ուշադրություն չի դարձրել: Ըստ այդ քառյակի, տոմարի ժամանակը վերադառնում է մինչև 1641: Թերևս առանձին երկու գործեր են, հետո իրար կցված: Իսկ Կեղեցու գործը հաստատապես գրված է Զեյթունցու գործից առաջ, որից և օգտվել է Զեյթունցին իր տոմարը գրելիս: Կաֆայեցին աչքի առաջ է ունեցել և՛ Կեղեցու և՛ Զեյթունցու տոմարները, և հայկական մասով հենվում է վերջինի վրա: Զեյթունցու տոմարը միայն հայկական տոմարն է, հայ եկեղեցու տոմարով և անհրաժեշտ գիտելիքներով: Օգտվելով Կեղեցու տոմարից, նա իր հաշվումները կատարել է հայկական ամսանունների և տոմարագիտական տվյալների վրա. մի բան, որ բարձրացնում է իր աշխատանքի մանկավարժական արժեքը, որովհետև այնտեղ աշակերտը հստակ և հակիրճ գտնում է այն բոլորը, ինչ անհրաժեշտ է իր եկեղեցական կյանքում, ընդհուպ մինչև օրվա ձայնը գտնել: Անշուշտ աշխատությունը տոմարագիտական խոշոր արժեք չի ներկայացնում, բայց անպայման կարևոր է հայ տոմարագիտության պատմության համար: Տոմարին կցված է մի հիշատակարան, որը ճանաչողական մեծ արժեք ունի: Իսկ ո՞վ է Դավիթ Զեյթունցին:

Դավիթ Զեյթունցու անունը հայ բանասիրությանը գրեթե անծանոթ էր մինչև Ն. Ադոնցի նշանավոր աշխատությունը՝ «Արուեստ Դիոնիսեայ Քերականի և հայ մեկնությունը նորին»: Անվանի հայագետը Զեյթունցու «Մեկնություն Բերականի» աշխատության մասին գրում է միայն հետևյալը. «Ինչ որ Դավիթ Ամիրդեցու աշխատությունը, որը ներկայացնում է Հովհաննեսի քերականության վերածումը հարց ու պատասխանի»: Հետո Գ. Զահուկյանը իր «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» մենագրության «Հավելված» բաժնում անդրադարձել է Զեյթունցու քերականությանը ավելի հանգամանորեն, առանց հատուկ ուշադրություն դարձնելու հեղինակի կենսագրությանը: Մինչդեռ զանազան հիշատակարաններում մնացած վկայություններից իմանում ենք, որ նա «Այդ գիտնական և քաջ փիլիսոփայ էր, յոյժ հմուտ Հին և Նոր Կտակարանաց»: Նա եղել է մեծ մանկավարժ՝ «Բազում ջանի և աշխատութեամբ»: Նրան հատուկ գրով հրավիրել են Լվով, ղեկավարելու համար տեղի Հանկատար ս. Աստուածածին վանքի հոգևոր ուսումնարանը: Զեյթունցին գտնվելով Լվովում, նկատում է, որ իր աշակերտների մեծ մասը տեղական բարբառներով խոսողներ են, ոմանք հայերենի՞ն ոչ լավ ծանոթ, և նախորդ քերականների ողջ ժառանգության նյութի վրա նրանց համար պատրաստում է քերականության դասագիրք՝ հարց ու պատասխանի վերածված, որտեղ աշակերտը գտնում է քերականության վերաբերյալ այդ շրջանի մակարդակով տրված գրեթե բոլոր հարցերն ու նրանց պատասխանները, երբեմն դիջադերեն (թաթարերեն) օրինակներով, հաճախ բացատրելով նույնիսկ հեշտ բառեր, որպեսզի ավելի մատչելի լինի: Նա իր քերականությանը կցել է նաև քերականական տերմինների մի բառարան՝ հայերեն-դիջադերեն: Զեյթունցու քերականությունը այս իմաստով իր տեսակի մեջ ամենամտաբուխակն է և մատչելին: Դժբախտաբար Զեյթունցուց այլ գործ, առ այժմ, հայտնի չէ մեզ, բացի այս երկուսից:

Զեյթունցու աշակերտներից Նիկոլ Լվովցին իր հիշատակարանում նրան մահացած է հիշում 1615-ին: Ծննդյան թվականը անորոշ է: Բայց Ղուկաս Կեղեցի նիւր վերոհիշյալ տոմարում գրում է.

«Իսկ տէր Դավիթըն Զեյթունցի
Յիմէն խնդրեաց և ես գրեցի
ի խրախոյթին մանկագունի
Այլ յիմաստնոց պարսաւելի»:

Ըստ մի այլ քառյակի, Կեղեցին իր տոմարը գրել է Հայոց 1006 թվին, որ է 1557-ին: Թերևս նա եղել է Կեղեցու ուսումնակիցը և իր ընկերոջը խնդրել է տոմարը չափածոյի վերածել իր մանկավարժական աշխատանքների համար: Համեմայն դեպս նա Կեղեցուց շատ փոքր չի եղել, նաև ոչ նրա աշակերտը: Ա. Աբրահամյանը Կեղեցու ծնունդը դնում է ԺԶ դարու քսանական թվերին, ելնելով այն բանից, որ նա, տոմար գրելիս, գոնե պետք է երեսուն տարեկան լիներ: Մենք, որոշ վերապահությամբ, ստույգ տվյալ չունենալու պատճառով, Զեյթունցու ծնունդը դնում ենք նույն դարու երեսնական թվերին, ընդունելով Կեղեցու տարիքային ավագությունը:

Այսպիսով, Դավիթ Զեյթունցին հայ միջնադարի աչքի ընկնող մտավորականներից է՝ քերական, տոմարագետ և մանկավարժ: Զեռագրերի ուսումնասիրությունը կարող է բացահայտել իր գրչին պատկանող այլ գործեր, հատկապես, ենթադրում ենք, Հին և Նոր Կտակարանի մեկնություններ, իր ղեկավարած ուսումնարանի դասընթացների համար: Պերճախոս օրինակ է քերականությունը:

Զեյթունցու տոմարը գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանի №№ 4001 և 6731 գրչագրերում: Այն հրապարակում ենք երկու օրինակների համեմատությամբ, ուղղագրական մասնակի ուղղումներով:

Պատճէն հայոց տոմարական
Զոր ի նախնեաց մեր պարգեցաւ
Բայց ի Դաթէս վանգ չափեցան
Ոտանաւոր շարադրեցան:

Կալցես զՀոռի ընդ կրկնակին
սոյնպէս առնես զամենեսին
Բայց կիսակին քրսան և ին
Կէս աւելի երթն ընդ նըմին:

5 Անուանք ամսոցն հայկազան
Նաւասարդի, Հոռի աշնան
Սահմի, Տրէ, Քաղոց ձմռան
Արաց և Մեհեկի, որ կան

5 Կրկնակ չկա Նաւասարդի
Երկուք Հոռի և չորս Սահմի
Վեց է Տրէ և Քաղոց մի
Երեք Արաց հինգ մեհեկի:

10 Եւ Արեգի ամիս գարնան
Ահկի և Մարերի աշցան,
Եւ յետ սոցա Մարգաց ամռան
Հոռոյից և Աւելեաց լցան:

10 Դարձեալ կրկնակ չէ Արեգի
Ահկի երկուք չորս Մարերի
Վեց է Մարգաց և մէկ Հոռոյի
Եւ աւելեաց լայլ ոչ պիտի:

Կրկնակ ամսոց այսպէս գուգին.
Կալցես զաւորս Նաւասարդին
15 Երթն երթաս զամենեսին
Մընա կրկնակ Հոռի ամսին

Կիսակ ամսոց այսպէս գործի.
Ի Նաւասարդէ առաջ թոյի
15 Ամէն ամսից մէս-կէս առցի,
Երկամսոյն կիսակ կազմի:

6 A Նաւասարդիք
7 A Տրմէ
8 B Մեհեկի
15 A Երթնք B Ութնք

5 B չիկա
7 B վեց
8 AB հինգ
12 AB Եւ փիւ եւ
15 A առցին
16 A երկամսոյն

- Քաշիք ամսոց երեսուն լինի
Այլ հինգ ամսոց կայ անելի
Արդ Մեհեկի ձմռան վերջի
Թիւ մ'անելու ի նահանջի:
- 5 Փոքր թուական այսպէս արա.
Կալ զթուականըն մեծ Հայկայ
Թիւ մ'անելի կայ ի մնա
Ի բաց գնա, որ ուղիղ գայ:
- 10 Շրջան որքան որ յաւելնայ
Տասն Որելեան զամէնն գնա
Իերսուն ւերկուք այլ ընդ անոցա
Թիւ անոր տարուն է, որ մնայ:
- 15 Եթեմ երեակ այսգոն արա
Կալ զթվական և բաժանեա
Քսան և ութ զամէնն գնա
Տես թէ ի խոնարհ որքան մնայ:
- 20 Ամէն չորս թիւ մէկ անելնայ
Եթեմ երթաս թէ ինչ մնայ
Եթեմակ տարուն առնես գնա
Մի թուով պակաս, որ ուղիղ գայ:
- 25 Կալ զեթներեակ աճցեալ ամին
Թիւ մի անել վերայ անորին
Եթեմերեակ ապագային
Լինի առանց թվականին:
- 30 Բայց ի չորրորդ ամ նահանջին
Ի եթեմերեակ լինի կրկին
Մէկ մի ի մուտ Նաւասարդին
Երկ Արեգի ամսամտին:
- 35 Ամսամտին կալցես թիւ մի
Զկթնակ տարուն զկրկնակ ամսին
Եթեմեր երթաս, որ վճարին,
Թէ մէկ մնայ է կիրակին:
- 35 Եւ թէ երկու երկուշաբթին
Նոյնպէս երեք, որ ի կարգին
Օրագիտին կալ զօր ամսին
Եւ այլ որպէս զամսամտին:
- 40 Այսպէս արա վերադրին
Կալ զթվական որքան լինին
Տասն և իններ ձգես զինքնին
Մնայ խորանք վերադրին:
- Տես թէ քանի է թիւ անորին
Տասնումէկով բազմապատկին
Եւ հանապազ ի բաց բառնին
Եւ երեսնօք ձգէ զնոսին:
- 5 Քան զերեսուն որ ցած լինի
Այն վերադիր ներկայ ամին
Լրում և ծնունդ ւաւորք լուսնին
Սովա առնին ամենեսին:
- 10 Բայց իննստասն երկասմին
Թիւ մի անել վերադրին
Բաշխես զթուականն տասնին
Որ լիով գայ այն է տարին:
- 15 Այլ Աւելեաց օրն վերջին
Զինչ որ լինի գիր պատկերին
Եթեմեակ է հանդերձեալ ամի
Եւ զվերադիր քանիք լուսնին:
- 20 Վերադրով վերադրին
Կալ զվերադիր անցեալ ամին
Մետասան բեր վերայ անորին
Նոր վերադիր ապագային:
- 25 Ծնունդ լուսնի առնես տարուն
Կալ երեսուն թիւ կամ վաթսուն
Զվերադիրն երթ կիսակ ամսուն
Մնայ ծնունդ այքան ամսուն:
- 30 Աւորց լուսնին կալ զօր ամսին
Զկիսակ անորին զթիւ վերադրին
Երթ երեսուն կամ անելին
Մնացեալն ամսոք լինի լուսնին:
- 35 Լրումն այսպէս արա լուսնին
Կալ քառասուն հինգ ընդ մին
Երթ զվերադիր ընդ կիսակին
Մնայ ամսոք լրման լուսնին:
- 40 Առաջաւոր այսպէս շինես
Երսուն և չորս թիւ արակա
Ի նահանջին թիւ մ'անելա
Եւ զվերադիր ի բաց գրնա:
- 40 Զմնացեալն Արաց օրագիտես
Ի կիրակի առաջ գնա
Թէ կիրակի է օր անորա
Ի միսն անցին որ ճար չկայ:

1 A ետուն

13 A Եթեմերեակ

16 B մնա

23 AB Եթեմերեակ

25 AB չորրորդ

29 AB Ամսամտին

30 AB զկրկնակ

1 B ի փիւ է

3 B եւ փիւ եւ

3 B քառն

11 AB քաշիս

19 AB վերա

23 AB ամսամ

27 AB Երդ

34 AB ւշորս

40 AB չիկա

- Բայց իննևտասն տարիքն որ է
Նա մի անգամ այս պատահե
Որ վերադիր մի թիւ առնէ
Առաջատրն սխալի:
- 5 Յորժամ երթաս ի յերեսնէ
Եւ չորս թուէ կամ և ճնգէ
Զմնացեալքն երեսուն ի բաց
մերժէ
Եւ զայն Արաց օրագիտ է:
- 10 Գիր բանալեաց այս զայն հանէ
Առաջատրն որքան որ է
Յալտնութիւնէն առաջ թուէ
Հընգի պակաս գիր տարուն է:
- 15 Ասագ լրումն որ է Զատկի
Այսպէս արա ամէն տարի
Կալ քառասուն թիւ ընդ չորսի
Եւ զվերադիրն գնա աստի:
- 20 Թէ քան զերկտասան թիւ աւելի
Մնայ տացես Արեգ ամսին
Եւ թէ պակաս մինչև ի մի
Ահկի ամսի օրագիտի:
- Պատկեր ատր ինչ որ լինի
Թունա և տուր ի կիրակի
Թէ հանդիպի ի կիրակի
Ի միւս անցո Զատիկ լինի:
- 25 Որ վերադիր մի թիւ լինի
Երսուն այլ ած ոչ սխալի
Ի քառ չորից ի բաց ձգի
Զայլ Արեգի տուր ի կարգի:
- Քանիք Զատկի թէ Արեգի
- 30 Ութ այլ աւել նոյնպէս Ահկի
Չորրորդ ամսոյն այնքան թուի
Վարդապետին տուն կատարի:
- Քանիք անշարժ եղանակի
Օրագիտով ըստուգ ցուցանի
35 Ի հինգն ամսոյն Նաւասարդի
Տօն է Փոխման Աստուածածնի:
- Նոյնպէս ի հինգ օրն Հոռի
Վերացման տօն է տուր Խաչի
Ի յինն օրն աշուն մտի
40 Տիւ և գիշեր հաւասարի:
- Տրէի տասն օրագիտի
Բարեկենդան յիսնակ մտի
Քաղցի մի տուր Յակոբի
Բարեկենդան առ կիրակի:
- 5 Մին ամսոյ ի տասն եկի
Զմեռնամուտ դարձար և ին
Զի բարձրանայ ի ձմերայնի
Եւ խոնարհի ամարայնի:
- 10 Ի քսանութեկն յայտնութեկի
Բարեկենդան Հայոց ազգի
Ի քսանչորս կաղանդ լինի
Որ տարեմուտ է հոռումի:
- 15 Ի քսանութն ծննդեան տօնի
Եւ մկրտումն է Քրիստոսի
Նա և ի յոյթն Մեհեկի
Տեառնընդատաջ տօն կատարի:
- 20 Ի երկուտասանն Արեգի
Գարնանամուտ հասարակի
Ի երեսուն սրմին ամսի
Աւետիքն է Աստուածածնի:
- Անկատեղն է ի յնթն Ահկի
Ընդ արևու շրջապատի
Ի տասնութն Մարերի
Անկեալ աստղունքն որ երևին:
- 25 Եւ ի Մարգաց տաւերեքի
Ամառամուտ դարձ արևի
Բարձր է կողմամբ հիւսիսայնի
Եւ ցածրութիւն հարաւայնի:
- ԶԱստուածածնին և գտուր
Խաչին
- 30 Զիսնակ մտի գտուր Յակոբին
Ի յետ դարձո գշորեքշաբթին
Զհինգշաբթին տուր ի կիրակին:
- Այլ տանուտէր տարու ստուգէ
Երկտասանօք զթիւքն ձգէ
35 Զցածն ի Խոյէն առաջ բաշխէ
Յուր հասանի տարուն այն է:
- Տանուտէրանցն անուանք այս է
Տուր աստեղաց սոցա ասէ.
Խոյն և Յուլն, Եկատրն է
40 Եւ Խեցգետինն նահանջ է:

18 AB Արեք
24 A Զատիք
31 AB Չորրորդ

2 AB Բարեկենդան
7 B ի փխ ին
9 B քսանութեկն
12 A տարեմուտ
25 B տասնութեքին
27 B կոչմամբ փխ կողմամբ

- Առիծ և Կոյսն և Կշեռն է
Կարին կրկին նահանջ բերե
Աղեղնաւորն, Այծեղջիր է
Զրհուսն և Զուկն նահանջ է:
- 5 Ի տասնեւչորս Արեգ ամսուն
Արեգակն մտնու ի Խոյն
Պարտ է զմի մի օր երեսուն
Զամենն երեք հարիւր վաթսուն:
- 10 Արարչութեանն հինգ ատուր
Արեգակն զատեղսն տուր
Լուծ լեղջորի և ծկաւոր
Փառանձնոտի և արտախոյր:
- 15 Կալ ի Զատկէն ուր ես
Ութ-ուրթ կամ քառասուն ձգես
Առաջի ձայնէ զհինք բաժանես
Եւ զձայն ատուրն գտանես:
- 20 Ոտանաւորս այս տումարի
Եղև ի Լով մեծ քաղաքի
Ընդ հովանեաւ Աստուածածնի
Հայոցըն սուրբ եկեղեցի:
- Քահանայից սրբազանի
Տէր Գասարին, տէր Խաչատրին
Տէր Վարդանին, որ են ի սմի,
Որ քաջ հովիւ են սուրբ ուխտի:
- Նաև վանից միաբանի
Կուսակրօն քահանայի
Եպիսկոպոս Ստեփանոսի
Տէր Կարապետ մեծ հայրապետի:
- 5 Եւ տէր Վարդան արեղայի
Եւ ընդ նոսին տէր Գրիգորի
Որ սպասաւորք են սուրբ ուխտի
Հանկատար սուրբ Աստուածածնի:
- 10 Այլ տէր Սահակ արեղայի
Որ հանդիպաւ այսմ տեղի
Եւ այլ մանկանց սուրբ Սիովնի
Սարկաւագաց ամենայնի:
- 15 Թորոս Իվաշկօ և Սիմոնի
Եւ Զախնդի քահանայի
Որ աշխատին լեւո սուրբ գիրքի:
Մակացութեանց և ընդ ճրբի:
- 20 Որք բաղձացան սըմին իրի
Եւ խնդրեցին և ես գրեցի
Յիմար Դաւիթս Զէթունցի
Զասկաւ տումարս ի ոտ հանի:
- Ի հազար լիսուն թուականի
Ի ժամանակ բարեպաշտի
Եւ ութ թուով է աւելի
Զիկմունտի քաջ թագաւորի:

1 B ի (կշեռն)

2 AB կուսակրօք

12 AB Սարգաւագաց

19 B իմար

